ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**

2. Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ**

3. Գործուղման վայրը և ժամկետները. **Ժնև, Շվեյցարիայի Համադաշնություն, 2018 թվականի հոկտեմբերի 3-5-ը**

4. Հրավիրող կողմը. **ՄԱԿ ՓԳՀ**

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Մասնակցությունը ՄԱԿ-ի ՓԳՀ ծրագրի գործադիր կոմիտեի 69-րդ նստաշրջանին, երկկողմ հանդիպումներ միջազգային գործընկերների հետ**

6. Քննարկված թեմաները.

Գործադիր կոմիտեի ընթացքում հիմնականում քննարկվել են միջազգային պաշտպանության տրամադրմանն առնչվող հարցեր, լսվել են Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատար Ֆիլիպո Գրանդիի, Համաշխարհային բանկի գործադիր տնօրեն Կրիստալինա Գերգիևայի ելույթները: Ընդհանուր քննարկման ժամանակ մասնակից երկրներից յուրաքանչյուրը ևս ներկայացրել է երկրի դիրքորոշումը փախստականներին առնչվող խնդիրների մասին: ՀՀ երկրի զեկուցումը (country speech) ներկայացրել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը: Միջազգային պաշտպանությունից զատ քննարկվել են ՄԱԿ ՓԳՀ ադմինիստրատիվ, ֆինանսական և ծրագրային հարցեր, հաստատվել է Մշտական կոմիտե 2019թ. աշխատանքային ծրագիրը և 2018-2019թթ. երկամյա բյուջեն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել ՄԱԿ ՓԳՀ Եվրոպայի բյուրոյի տնօրեն Պասկալ Մորոյի և տնօրենի տեղակալ Անջելա դի Ռոսսիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ինչպես ՄԱԿ ՓԳՀ երևանյան և տարածաշրջանային (Թբիլիսի) գրասենյակների հետ ընթացիկ համագործակցության հարցեր, այնպես էլ համագործակցության հեռանկարները: Մասնավորապես, տկն. Մորոն հավաստիացրել է, որ չնայած ՄԱԿ ՓԳՀ ընդհանուր բյուջեի կրճատումներին (պայմանավորած ԱՄՆ կողմից վարվող նոր քաղաքականությամբ), Հարավային Կովկասի գրասենյակներին տրամադրվող գումարը չի նվազի: Տկն. Մորոն բարձր գնահատեց Միգրացիոն ծառայության հետ համագործակցությունը և հավաստիացրեց, որ շարունակաբար կօժանդակեն, այդ թվում և ֆինանսապես, ապաստանի համակարգի

բարեփոխումներին, որոնք նախաձեռնվել են: Էական է նաև, որ չի կրճատվի նաև Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում ապաստանի համակարգի որակի բարձրացման նախաձեռնության տրամադրվող գումարը, որը կարևոր է Հայաստանում ապաստանի համակորգի շարունակական բարեփոխման տեսանկյունից: Միաժամանակ տկն. Մորոն վստահեցրեց, որ հայաստանյան գրասենյակին տրամադրվող բյուջեի շրջանակներում իրենք պատրաստ են հատկացումներ կատարել ապաստան հայցողների նոր «Հատուկ կացարանի» կահավորման համար (ընդհանուր 100.000 եվրո երկու տարվա շրջանակներում): Կարևոր է նաև ապաստանի հարցազրույցների թարգմանություններին մասնակի օժանդակությունը:

Երկրորդ օրվա ընդհանուր քննարկման ժամանակ Ադրբեջանի պատվիրակն օգտվել է պատասխանի իրավունքից և արձագանքել առաջին օրը փոխնախարար Հովակիմյանի ունեցած ելույթին՝ նշելով, որ Սումգայիթի ողբերգությունը հայեր Էդուարդ Գրիգորյանի և իր ընկերների կազմակերպածն է, որ Հայաստանն օգտագործում է փախստականներին, իսկ Սիրիայից եկող փախստականներին «բնակեցնում է Ադրբեջանի օկուպացված տարածքներում»: Այս հայտարարությանն իմ պատասխանը կցվում է (առդիր մեկ էջ): Պատասխանը լայնորեն լուսաբանվել է հայկական մամուլում, արձագանք է գտել նաև ադրբեջանական մամուլում (http://vzglyad.az/news/119724):

Նույն օրը միջազգային պաշտպանության թեմայի քննարկման ընթացքում ելույթ եմ ունեցել և ներկայացրել Հայաստանում միջազգային պաշտպանության և ապաստանի համակարգերը, շեշտադրել ինտեգրման քաղաքականության և բնակապահովման կարևորությունն այս համատեքստում: Ելույթում անդրադարձ եմ կատարել նաև ՄԱԿ ՓԳՀ ամբիոնի քաղաքականացման փորձերին, քանի որ ադրբեջանցի պատվիրակի երկրորդ արձագանքից հետո վարողը փակել էր դեբատը և արձագանքելու հնարավորություն չկար: Անգլերեն լեզվով ելույթը կցվում է (առդիր երկու էջ):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Փաստաթղթեր չեն ստորագրվել, պայմանավորվածությունների մասին նշված է նախորդ բաժնում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ցանկալի կլիներ նման միջազգային ֆորումներում ԱԳՆ կամ տվյալ երկրում դիվանագիտական ներկայացուցչության կամ առաքելության ներկայացուցչի մասնակցությունը այլ գերատեսչությունների ներկայացուցիչների այցերի դեպքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

08.10.2018թ.